ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական համակարգչային համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման և սպասարկման մասին» 2003 թ. փետրվարի 14-ի թիվ 03/019 պայմանագրում լրացում և փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «29» դեկտեմբերի 2021 թ.

Իրավական Տեղեկատվական Կենտրոն ՓԲԸ-ն, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն, ի դեմս տնօրեն Ռոբերտ Ավագյանի, այսուհետ՝ ԿԵՆՏՐՈՆ, մի կողմից և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, այսուհետ՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթները կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին՝

1. Կողմերի միջև 2003թ. փետրվարի 14-ին կնքված «ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական համակարգչային համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման և սպասարկման մասին» թիվ 03/019 պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Պայմանագրի 3-րդ բաժինը լրացնել նոր՝ 3.3 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԿԵՆՏՐՈՆԸ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ է տրամադրում «ԻՐՏԵԿ» իրավական տվյալների բազայից օգտվելու 1 (մեկ) ոչ բացառիկ լիցենզիա:»

բ) Պայմանագրի 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ներդրված համակարգի առաջին օրինակի ամսական սպասարկման գինը՝ ներառյալ հարկերը, կազմում է 10000 (տասը հազար) դրամ: Համակարգի երկրորդ, երրորդ և չորրորդ օրինակներից յուրաքանչյուր օրինակի ամսական սպասարկման գինը՝ ներառյալ հարկերը, կազմում է 5000 (հինգ հազար) դրամ:

Համակարգի չորս օրինակների ամսական սպասարկման գինը՝ ներառյալ հարկերը, կազմում է 25000 (քսանհինգ հազար) դրամ:»:

2. Սույն Համաձայնագիրը ստորագրված է երկու օրինակից (յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ):

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2022 թ. հունվարի 1-ից:

Կողմերի հասցեները և ստորագրությունները.

ԿԵՆՏՐՈՆ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ («ԻՐՏԵԿ») ՓԲԸ	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ա. Ավետիսյան 63, 42/1 տարածք	Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
հեռ. 011-322080 E-mail: info@irtek.am	հեռ.010-650015 E-mail: www.1tv.am
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, կոդ 20500 h/h 2050022009911001	«Արդշինբանկ» ՓԲԸ h/h 2470102796740000
ՀՎՀՀ 01517279	ՀՎՀՀ 01540062
տնօրեն Ռ. Ավագյան	գործադիր տնօրեն Հ. Մովսիսյան
Կ.Տ.	Կ.Տ.